ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«14 դեկտեմբերի» 2018 թվականի № 184-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ԳԼՈԲԻՆՎԵՍՏ ՄԵՆԵՆՋՄԵՆԹ ՍԸԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԳԼՈԲԻՆՎԵՍՏ ՄԵՆԵՆՋՄԵՆԹ ՍԸԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 146-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պետական տուրքի մասով 3 591.8 հազար դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով 894.8 հազար դրամ ապառքներ: Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-387 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետում և 5-րդ կետերով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 03/29.4/2602-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2018 թ. նոյեմբերի 9-ի թիվ 146-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը, քննարկելով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի արդյունքները գտավ, որ վարույթը ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից գումարն ամողջությամբ մարվել է, ինչը հաստատվում է Ընկերության տնօրեն Մ.Սիմոնյանի կողմից վարչական վարույթի հանձնաժողովին ներկայացված վճարման անդորրագրերով:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ԳԼՈԲԻՆՎԵՍՏ ՄԵՆԵՆՋՄԵՆԹ ՍԸԼՅՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 146-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Ընդերքի գործակալության պետին՝ 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

12/14/2018

X

VERIFIED OCSP 14-Dec-18 12:19:27 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118